ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 29/40-Լ «17» 02 2025 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՀՐԱՎԻՐՅԱԼ ՊՐՈՖԵՍՈՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ-ում կազմակերպել հրավիրյալ պրոֆեսորի դասավանդման դրամաշնորհի տրամադրման մրցույթ:

2. Հաստատել մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորին:

4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին:

ՌԵԿՏՈՐ՝ Հ. Հովհաննիսյան Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Կցված ԵՊՀ ռեկտորի 17.02 թ. 29/10-2 հրամանին

ԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՀՐԱՎԻՐՅԱԼ ՊՐՈՖԵՍՈՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ ԵՊՀ) հրավիրյալ պրոֆեսորի (այսուհետ՝ Պրոֆեսոր) դասավանդման դրամաշնորհի (այսուհետ՝ Դրամաշնորհ) տրամադրման պահանջները և մրցույթի անցկացման կանոնները:

1.2. Դրամաշնորհի տրամադրման նպատակը կրթության ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցության խթանումն է և միջազգային չափանիշներին համապատասխան որակյալ կրթության տրամադրումը:

1.3. Դրամաշնորհի տրամադրման և մրցույթի իրականացման գործընթացը համակարգում և կազմակերպում է ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

2. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

2.1. Ուսումնական ստորաբաժանումը դրամաշնորհի մրցույթի մասնակցության հայտը՝ կից փաստաթղթերով, կարող է ներկայացնել Վարչություն յուրաքանչյուր տարվա ապրիլի 10-ից մայիսի 20-ն ընկած ժամանակահատվածում՝ ուղարկելով այն education@ysu.am էլ. փոստին:

Նշված ժամկետի ավարտից հետո ներկայացված հայտերը ենթակա չեն քննարկման:

2.2. Մրցութային փաթեթը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը՝

- ուսումնական ստորաբաժանման ղեկավարի զեկուցագիր Դրամաշնորհի մասնակցության վերաբերյալ,
- Պրոֆեսորի ինքնակենսագրություն (CV),
- առաջարկվող դասընթացների նկարագրիչներ՝ «pdf» կամ «jpg» ձևաչափով (ստորագրված),
- կրթական ծրագրի ղեկավարի հիմնավորում՝ հրավիրյալ պրոֆեսորի կողմից դասավանդման անհրաժեշտության վերաբերյալ,
- ուսումնական ստորաբաժանման գիտական խորհրդի որոշման քաղվածք Դրամաշնորհի երաշխավորման վերաբերյալ:

2.3. Դրամաշնորհի տրամադրման մրցույթի անցկացման և հայտերի փորձաքննության կազմակերպումը համակարգում է ԵՊՀ մեթոդական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ):

2.4. Հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, Խորհուրդը կազմակերպում է Դրամաշնորհի հայտերի փորձաքննություն:

2.5. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է անդամների ընդհանուր թվի 2/3-ը:

2.6. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

2.7. Խորհրդի կողմից ֆինանսավորման երաշխավորված հայտերի ցանկը ներակայացվում է ռեկտորի հաստատմանը:

3. ՊՐՈՖԵՍՈՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Հրավիրյալ պրոֆեսոր կարող է լինել օտարերկրյա համալսարաններում գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվող այն անձը, ում Հիրշի ինդեքսն (h-index) ըստ «Scopus» (https://www.scopus.com/freelookup/from/author.uri) գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների, պետք է լինի առնվազն 4՝ հումանիտար և 7՝ բնագիտամաթեմատիկական ուղղությունների համար:

3.2. Պրոֆեսորը պետք է գտնվի Հայաստանի Հանրապետությունում մեկ կիսամյակ և դասավանդի 6 կրեդիտին համարժեք մասնագիտական դասընթաց/ներ, ինչպես նաև ղեկավարի առնվազն մեկ ավարտական աշխատանք կամ մագիստրոսական թեզ: Հատուկ դեպքերում (համապատասխան պրոոեկտորի հաստատմամբ և դասընթացը սեղմ ժամկետում իրագործելու հնարավորության դեպքում) հրավիրյալ պրոֆեսորը կարող է գտնվել Հայաստանի Հանրապետությունում ավելի սեղմ ժամկետում, սակայն ոչ պակաս քան 30 աշխատանքային օր:

3.3. Պրոֆեսորն իր պաշտոնական էլեկտրոնային հասցեից պետք է education@ysu.am էլեկտրոնային հասցեին ուղարկի իր կենսագրական տվյալները (Curriculum Vitae) և հաստատող նամակ (Letter of Confirmation)՝ նշելով, որ ծանոթ է Դրամաշնորհի հրավերով նախատեսված իր պարտականություններին և գործառույթներին:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Պրոֆեսորի աշխատանքի վարձատրության և կեցության ապահովման ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 5000,0 հազար ՀՀ դրամը:

4.2. Պրոֆեսորի Հայաստանի Հանրապետության գործուղման ծախսերը հոգալու համար նախատեսվում է առավելագույնը 500,0 հազար ՀՀ դրամ:

4.3. Ընթացիկ դրամաշնորհում կարելի է փոփոխություններ կատարել՝ դրանք

նախապես համաձայնեցնելով համապատասխան պրոռեկտորի հետ:

4.4. Դրամաշնորհի կատարման ընթացքում սույն կարգով սահմանված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում ֆինանսավորումը կարող է դադարեցվել՝ ուսումնական ստորաբաժանմանը երեք տարի ժամկետով զրկելով դրամաշնորհին դիմելու իրավունքից:

ՆԱԽԱՀԱՇԻՎ[1]

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (*ներառյալ եկամտային հարկը*)

Ազգանուն անուն հայրանուն	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար
1)			
2)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ			

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
1)	
...	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	

ՈՒՍ ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) *(ազգանուն, անուն, հայրանուն)*

Գլխավոր հաշվապահ՝ _____ _____

(ստորագրություն) *(ազգանուն, անուն, հայրանուն)*

[1] Ծախսային հոդվածների միջև վերաբաշխումները չեն կարող գերազանցել 10 % -ը, աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների վերաբերյալ ծախսային հոդվածում վերաբաշխումներ չեն կարող լինել: